## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3
## 03 փետրվար 2020թ.-ին կնքված N «ՎԱԿՏՄ-ԳՀԾՁԲ-20/5-1» ծածկագրով՝ Պետության կարիքների համար ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի

ք.Երևան «27» «01» 2022թ.

Վարչապետի աշխատակազմն, ի դեմս պատշաճ կարգով լիազորված անձ, վարչապետի աշխատակազմի գործերի կառավարիչ Գ. Բոշյանի, որը գործում է Աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Քրոսսնեթ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Ալեքսանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, Կրթության տեսչական մարմինը, ի դեմս մարմնի ղեկավար Ա. Շագաֆյանի (այսուհետ՝ Ծառայություն ստացող) մյուս կողմից՝ երեքը միասին (այսուհետ՝ կողմեր), հիմք ընդունելով ՎԱԿՏՄ-ԳՀԾՁԲ-20/5-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 և 7.13 կետերը, ինչպես նաև ՀՀ Կառավարության 04.05.17թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 18-րդ կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

### *1. Համաձայնագրի առարկան*

1.1 Հաշվի առնելով, որ 2022թ. պետական բյուջեով համապատասխան ծառայությունների մատուցման նպատակով հատկացվել է 776600 (յոթ հարյուր յոթանասունվեց հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին հաստատել Պայմանագրի ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն Տեխնիկական բնութագիր-Գնման ժամանակացույցի՝ հավելված N 1-ի և վճարման ժամանակացույցը՝ համաձայն հավելված N 2-ի:

1.2 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և տարածվում 2022թ-ի հունվարի 1-ից կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

### *2. Այլ պայմաններ*

2.1 Համաձայնագրի պայմանները կիրառվում են մինչև Համաձայնագիրն ուժի մեջ մտնելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում մինչև Համաձայնագիր կնքելը կատարողի կողմից մատուցված ծառայության դիմաց վճարումը իրականացվում է այդ Համաձայնագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

2.2 Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.3 Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.5 Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի N 1 և N 2 հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկ օրինակ:

### *3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները*

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ | ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՍՏԱՑՈՂ |
|---|---|---|
| Վարչապետի աշխատակազմ<br>ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն, 1<br>ՀՀ ՖՆ գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011024081<br>ՀՎՀՀ 02505554<br>---------------------------<br>/ստորագրություն/<br>Կ.Տ | «Քրոսսնեթ» ՍՊԸ<br>ք. Երևան, Սարյան 22, տար.2<br>ՎՏԲ-Հայաստան Բանկ ՓԲԸ<br>Հ/Հ 16048097516001<br>ՀՎՀՀ 01834381<br>---------------------------<br>/ստորագրություն/<br>Կ.Տ | Կրթության տեսչական մարմին<br>ք.Երևան 0051, Կոմիտաս 37/4<br>ՀՎՀՀ 00196177<br>---------------------------<br>/ստորագրություն/<br>Կ.Տ |

Հավելված
«03» փետրվար 2020թ. կնք...
«ՎԱԿՏՄ-ԳՀԾՁԲ-20/5-1Ը ծածկագրով պայմանագր...
« » « » 2022թ. կնքված N 3 Համաձայնագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | Ընդհանուր առավելագույն գինը /ՀՀ դրամ/ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | ժամկետը |
| 1 | 64211100/2 | Հանրային հեռախոսային ծառայություններ համաձայն կից աղյուսակ 1-ի | դրամ | 776600 | 1 | ք.Երևան 0051, Կոմիտաս 37/4 | 01.01.2022թ. 30.12.2022թ. |

## ԱՂՅՈՒՍԱԿ 1
## ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱԽՈՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

նկարագրությունը

1. Օպերատորը պետք է ապահովի բաժանորդի տարածքում գտնվող թվով 6 հատ արտաքին և թվով 14 ներքին (պատվիրատուի կողմից պահանջ ներկայացվելու դեպքում փոփոխման հնարավորությամբ) հեռախոսների համար ֆիքսված հեռախոսակապի ծառայություն:
2. Բաժանորդի արտաքին համարները պետք է լինեն թվով 6 հատ, միաժամանակ առնվազն 2 զանգ կատարելու հնարավորությամբ, որոնք բաժանորդը կարող է ընտրել տրամադրված համարների տիրույթից և անհրաժեշտության դեպքում ավելացնել:
3. Բաժանորդի կողմից սպասարկող օպերատորի ցանցում ելքային զանգերը պետք է լինեն անվճար:
4. Ցանցի ներսում պետք է ապահովվի բոլոր ներքին համարները միմյանց հետ անվճար խոսելու հնարավորություն:

Ելքային զանգերը՝

| № | մատուցվող ծառայությունը | Մատուցվող ծառայությունների միավորի գինը (ՀՀ դրամ/րոպե) |
|---|---|---|
| 1 | Ծառայության մեկ հեռախոսահամարի համար ներդրման միանվագ վճարը | 10800 |
| 2 | Տեղական և միջքաղաքային զանգեր Հայաստանի ֆիքսված այլ ցանցեր | 5 |
| 3 | ՀՀ բջջային բոլոր օպերատորի համար | 18 |
| 4 | Դեպի ԼՂՀ բջջային հեռախոսակապ (հաշվարկը պետք է կատարվի վայրկյաններով) | 18 |
| 5 | Դեպի ԼՂՀ ֆիքսված հեռախոսային ցանցեր | 14.4 |
| 6 | Ամսական սպասարկման վճարը /յուրաքանչյուր գծի համար/ | 120 |
| Ընդամենը՝ | | 10975.4 |

6. Օպերատորի կողմից Պատվիրատուի տարածքում՝ բացառությամբ հեռախոսային սարքավորումների, պետք է անվճար տեղադրվեն, կարգաբերվեն և գործարկվեն բոլոր անհրաժեշտ սարք-սարքավորումները, որոնք պայմանգրի ժամկետի ավարտից հետո կդառնան Պատվիրատուի սեփականությունը, տրամադրվեն և անցկացվեն անհրաժեշտ կապուղիները: Բոլոր անհրաժեշտ սարք սարքավորումների տեղադրումը, փորձարկումը, թերությունների վերացումը և համակարգի վերջնական գործարկումը պետք է լինի ոչ ուշ, քան ծառայության մատուցումից 10 աշխատանքային

օր առաջ:

7. Օպերատորը պետք է ապահովի տրամադրվող ծառայության անխափան աշխատանքը (Dual path redundant Service, UPS):

8. Ծառայությունների մատուցման ամսվա ընթացքում Օպերատորի մեղքով (Օպերատորի ցանցի անսարքությունների հնարավոր անջատումների) առաջացած թերությունների ընդհանուր ժամանակահատվածը, որը հաշվառվում է Օպերատորի անսարքության քարտերի համակարգում, չպետք է գերազանցի ամսական թույլատրելի սահմանաչափը՝ 4 (չորս) ժամը:

9. Օպերատորը պետք է տրամադրի Վեբ-ինտերֆեյսի՝ միջոցով պատվիրատուի հեռախոսագծերի հեշտ և օպերատիվ կառավարման և վերահսկման հնարավորություն (ծառայությունների ակտիվացում, զանգերի ձայնագրություն և զանգերի վերծանման առցանց հնարավորություն ցանկացած պահի), ինչպես նաև կառավարի ծառայությունից օգտվողների իրավունքները:

10. Օպերատորի կողմից տրամադրվող ներքին հեռախոսակայանը պետք է օժտված լինի VOIP տեխնոլոգիայի բոլոր հիմնական հատկություններով (Call Transfer, Call Parking, Caller ID, Conference Call, Video call, etc.)

11. Օպերատորը ԱՀԿ-ի միջոցով պետք է միացնի առանձնացված ստորաբաժանումները, և ապահովի նրանց հասանելիությունը միմյանց հետ՝ անկախ գտնվելու վայրից:

12. Օպերատորը պետք է տրամադրի անսահմանափակ SIP trunk-երի հնարավորություն, 24/7 ռեժիմով աշխատող տեխնիկական և ծրագրային առանձնացված օպերատորով սպասարկում, յուրաքանչյուր գիշեր ավտոմատ կերպով ԱՀԿ-ի Backup կատարելու հնարավորություն:

13. Սպասարկվող հեռախոսահամարները ինչպես նաև ելքային զանգերը կարող են ակտիվանալ և ապաակտիվանալ պատվիրատուի գրավոր պահանջի հիման վրա անվճար:

*Ծառայություն մատուցող ընտրված մասնակիցը պետք է ունենա հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցություն) բնագավառի լիցենզիա*

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ | ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՄՏԱՑՈՂ |
|---|---|---|
| Վարչապետի աշխատակազմ<br>ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն, 1<br>ՀՀ ՖՆ գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011024081<br>ՀՎՀՀ 02505554 | «Քրոսնեթ» ՍՊԸ<br>ք. Երևան, Սարյան 22,տար.2<br>ՎՏԲ-Հայաստան Բանկ ՓԲԸ<br>Հ/Հ 16048097516001<br>ՀՎՀՀ 01834381 | Կրթության տեսչական մարմին<br>ք.Երևան 0051, Կոմիտաս 37/4<br>ՀՎՀՀ 00196177 |
| ---------------------------<br>/ստորագրություն/<br>Կ.Տ | ---------------------------<br>/ստորագրություն/<br>Կ.Տ | ---------------------------<br>/ստորագրություն/<br>Կ.Տ |

*Հավելված*
*«03» փետրվար 2020թ. կնքվ...*
*«ՎԱԿՏՄ-ԳՀԾՁԲ-20/5-10 ծածկագրով պայմանագրի»*
*«27» «01» 2022թ. կնքված N 3 Համաձայնագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց առավելագույն վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 64211100/2 | Հանրային հեռախոսային ծառայություններ | 0 | 124256 | 124256 | 264044 | 264044 | 264044 | 489258 | 489258 | 489258 | 776600 | 776600 | 776600 | 776600 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

** վճարումը կիրականացվի փաստացի մատուցված ծառայությունների դիմաց:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ | ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՍՏԱՑՈՂ |
|---|---|---|
| Վարչապետի աշխատակազմ<br>ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն, 1<br>ՀՀ ՖՆ գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011024081<br>ՀՎՀՀ 02505554<br>-----------------------------------<br>/ստորագրություն/<br>Կ.Տ | «ՔրոսՍՆեթ» ՍՊԸ<br>ք. Երևան, Սարյան 22,տար.2<br>ՎՏԲ-Հայաստան Բանկ ՓԲԸ<br>Հ/Հ 16048097516001<br>ՀՎՀՀ 01834381<br>-----------------------------------<br>/ստորագրություն/<br>Կ.Տ | Կրթության տեսչական մարմին<br>ք.Երևան 0051, Կոմիտաս 37/4<br>ՀՎՀՀ 00196177<br>-----------------------------------<br>/ստորագրություն/<br>Կ.Տ |

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

Վարչապետի աշխատակազմը ստորև ներկայացնում է Կրթության տեսչական մարմնի կարիքների համար հանրային հեռախոսային ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՎԱԿՏՄ-ԳՀԾՁԲ-20/5» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2020 թվականի փետրվարի 3-ին կնքված N «ՎԱԿՏՄ-ԳՀԾՁԲ-20/5-1» պայմանագրում 2022 թվականի հունվարի 27-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

| | |
|---|---|
| Փոփոխության առաջացման պատճառ N 1 | Գնումն կատարվել է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետով: |
| Փոփոխության նկարագրություն՝ | կնքվել է համաձայնագիր և հաստատվել է պայմանագրի Տեխնիկական բնութագիր-Գնման ժամանակացույցը և Վճարման ժամանակացույցը: |
| Փոփոխության հիմնավորում ՝ | կնքված պայմանագրի 7.5 և 7.13-րդ կետերը և ՀՀ կառավարության 2017 թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 18-րդ կետը: |

Պատվիրատու՝ *Վարչապետի աշխատակազմ*